21. ԽԱՍՄԵ ՆԵՃԸՐՎԱՆ

Կէղնի, չէղնի նեճըրվան մը կէղնի։ Նեճըրվանի անուն Խասմ կ'էղնի։ Ըմեն անգամ կէրթա նեճիր կէնա, ուր նեճիրութենով կապրի։

Անգամ լա կէրթա նամրութա սար։ Կտեսնա օր, օձ մը հանդէ հ'ոդի, քարի պատռոնեն դուրս էլավ։ Օձ շատ մեծ կէղնի, ուշափ։ Ահու խասմի լեզուն կաուվի։ Քոռ ու փոշման կդառնա կիգա տուն։

Ուր կնիկ կըսա.— Ի՞նչ տավի ա, դու էսօր առանց նեճիրի էկար։

Ուր գլխու գալած կնկան կպատմա։

Շատ ժամանակ կանցնի մեչ։ Էմլա կէլնի կէրթա էդ սար նեճիրի։ Կտեսնա օր, օձ մը ուր ծկեն կէլնի ու զուր ծկի բոլոր կզաղա ու կէրթա։

Մեկ լա կտեսնա, էնդհեն օձ մը կիգա, Քոնի զէդ զաղ կընցնի, կտեսնա օր, օձ մ'ալ ծկեն կէլնի, ըդտեղ էդ էրկուս կփաթթվին հ'իրար։ Կըսա.—Ուլա, ես Խասմե նեճըրվան իմ էղի, իդա քան ժամանակ իմ անցուցի, իդըմլա բան դհա իմ վրեն չըմ ընցուցեր ի։

Կքաշե նետվանեղ, մեկ կզարկա, ծկի միչու օձ կբրինդրա։ Ըն օձ լա օր ղաղեր ա, գացեր ա, ընի օձերու թագավոր կըլնի, բրինդրուկ լա ուր կնիկ կէղնի։ Էն մեկել օձ լա օր կիգա, զաղ կընցնի, ընի լա ուր դոստ կէղնի։

Խասմե նեճըրվան զուր նեճիր կէնա, իրկուն կառնի զուր նեճիր, կիգա տուն։

Ըդ օձերու թագավոր լա իմաստուն կէղնի։ Գինա օր Խասմե նեճըրվան ա զարկե, զուր կնիկ բրինդրի։ Էրկու օձ կկանչա, կճամբցու, կըսա.— Էմալ խիթիք զԽասմե նեճըրվան, օր չուր չը խասնի ուր բերան։

Ըն էրկու օձ կէլնին կիգան։ Ըն մեկ օձ կըսա.— Մտնինք մըջ ուր սափոքի փողեն։

Էն մեկէլ ընկեր ըսեց.— Չէ, վոլա, ափսոս մարդ ա, կանչենք, տանինք մեր թագավորի հուղուր։

Ըսեց.— Ըրղ էղնի։

Գնաց կանչեց, ըսեց.— Խասմե նեճըրվան, արի, մեր թագավոր կխանչա։

Խասմե նեճըրվան էլավ, էկավ։

Թագավոր ըսեց.— Չ'որի՞ իս չսպանեցիք, բերեցիք իմ հղուր հանեցիք։

Ըն մեկ օձ ըսեց.— Չէ, Խասմե նեճըրվան ափսոս մարդ ա, Ըրղ զուր էղելութեն քըզի պատմա։ Եթե մեղավոր ա, մենք կարող ինք իտա տեղ լա ըսպանինք։

Ինչպես էղեր էր, էնպես պատմեց։

Օձերու թագավոր էլավ, կայնավ վըր ուր պոչին ու շըվաց։ Ինչքան օձ մա կար՝ էկան, զըմեն ժողվեց ու բերեց։ Խասմե նեճըրվնին ըսեց.— Դե ճանչցի էն օձ, օր էկի զիմ ղաղ հ'ընցի, օր ճանչցար՝ ես պտի զքզիճաքիմ։

Խասմե նեճըրվան էլավ գաշեց, ինչ հնարք էնեց, չկըռցավ գտավ, ու ըսեց.— Էդ մարդ չէկի։

Օձերու թագավոր էմլա կայնավ վըր պոչին, շվաց ու մեկ լա կանչեց։ Տեսավ օր՝ էլավ սև, լողոզիկ օձ մը, էլավ, հ'ուշիկ-հ'ուշիկ էկավ։ Խասմե նեճըրվան ըսեց.— Հա, իդա էր։

Էլավ ղէդ սև լողոզիկ օձ տվեց էրկու օձու ձեռ, ըսեց.— Էնպես էնիք, օր ուր կտորներ չէրևա։

Ու ընպես լե էնեցին։

Էլավ զուր կնիկ լա ըսպանեց, Խասմե նեճըրվանին ըսեց.— Դե քու ուզած ուղա, ես տամ։

Խասմե նեճըրվան ըսեց.— Բան օր ուզիմ՝ քու լեզուն զվռցուս իմ բերան, էլ բան չըմ ուզի։

Օձերու թագավոր ըսեց.— Ես զիմ լեզուն կղըվըռցում քու բերան ու մարդու չը պատմիս, քու գիտողություն անչափ կէղնի, օր պատմիս, կմեռնիս։

Ու զուր լեզուն զվըռցուց Խասմե նեճըրվանի բերան։

Խասմե նեճըրվան ինչ օր աստծուց խնդրվավ, ու աստված տվեց ուրեն։

Խասմե նեճըրվան օր էկավ ուր տուն, ահագին դուլվաթ ունեցավ

Ուր կնիկ դրեց ուր վրա ու աչեր ըսեց.— Դու զդա դովլաթ ո՞ստեն գտար։ Յան դու ընձի պտի պատմիս, յան քըղիկ կնկութեն չըմ էնի։

Ըսեց.— Կնիկ, դու նստի կի ու վայելա, գործ չունիս։

Ինչ օր ըսեց, չկրցավ չարե մը էնեց։ Անկարելի էղավ։

Ուր կնիկ ըսեց.— Յան ընձի կպատմիս, յան ես կէրթամ։

Խասմե նեճըրվան ըսեց.— Օր ես քըզի պատմիմ, անշուշտ կմեռնիմ։

Ըսեց.—Դու գինաս, ախըր ընձի պտի պատմես։

Կնկան ըսեց.— Գնա ընձի պատանք բի, զիմ պատրաստութեն տես, օր քըզի պատմեմ ու մեռնիմ։

Կնիկ գնաց ոլատանք բերեց, ջուր ու սապոն հազրեց, օր Խասմե նեճըրվան ասեր ուր գլխու գալած ու մեռներ։

Ճետ էլավ զհավեր քոմեց։ Քառասուն հավ քոմեց, ամեկ հավու գլուխ կտուց մի զարկեց, ըսեց.— Կնկա փոր հոգի՞ կա։

Ըսեց.— Խասմե նեճըրվան ա մեկ կնիկ, կէնա-չէնա՝ չկարողանա հաղթա։

Ըսեց.— Իգա գախ ուր կնիկ կուզա զինք մեռցնել։ Ես լախա էղա Խասմե նեճըրվան, դու քառսուն կնիկ իք, օր ես սիրտ էնիմ, զձըզի հ՚ըմեն մտում մեկ դդմի մեջ։

Խասմե նեճըրվան զհավքերու լեզուն կհասկներ։ Պառկած տեղեն էլավ, զկաղնի վարոց քաշեց քոքեհան, բռնեց կնկա ծամեր դը արի կնկա շան։ Զկնիկ տեխ սպանեց ու ինք թաժա կարգվավ։

Ին ամիս օր թըմավ, ուրեն տղե մը էղավ ու զուր տղեն դրեց դպրոց, կարդցուց։ Տղեն օր չափահաս էղավ, ուր ժամանակ լա լմըցավ ու հ՚ինք մեռնելու էր։

Ուր կնկան պատմեց, ըսեց.— Իմ տղեն ահագին դովլըթի տեր էղնի, անկարելի ա, մարդ մ՚ օր էղնի, պտի զուր հոր արհեստ դործածա։ Ես գինամ օր պտի ինք նեճրութեն էնա։ Օսիաթ կէնիմ՝ ինք հ՚ուր կէրթա, թըխ էրթա նեճրութեն, ապա Նամրութա սար թըխ չէրթա։ Նամրութա սար ուրեն վնաս կիտա։

Ու Խասմե նեճըրվանի ժամանակ լմըցավ ու մեռավ։

Տղեն շատ ժամանակով նեճիրութեն էնեց։ Ուր մամ ուրեն թանըիհ էնեց, ըսեց.—Հ՚ուր կէրթաս՝ գնա, Նամրութա սար չէրթաս, հ՚օրի օր քու պապու օսիաթն ա։

Օր մը լա օրերուց ըսեց.—Նանե, ինձի լավ պաշար էփիս, օր ես պտի Նեմրութա սար էրթամ։

Ուր մամ ըսեց.— Քու պապու օսիաթ հ՚որ՞ի կկոտրես։

Ինք ըսեց.— Նանե, մարդ ըսված պտի ընկնա ու էլնի, հարի մարդու օր բանով մը լցվի, ու մարդ մեռնի։ Թե իմ օր էկեր ա, ես տուն լա պտի մեռնիմ։

Ու էլավ, վերուց զուր նետվանիդ, ընկավ ճամբախ, գնաց։ Շատ ու քիչ գնաց, նամրութա սար էլավ։ Քիչըմ լա տեսավ օր կրակ ընկեր էր տեղ մը ու կվառեր։ Աչքեց տեսավ, օր ահագին օձ մը կար, քըծ ո՛ուշափ մը, հանդե էդ կրակի օրթալուխ։ Ու կրակ բռներ էր զէդրա բոլոր ու կվառեր։ Ու ճար մը չկեր էդ օձ էլներ ու էրթեր։

Զուր մղրախ երկնցուց ձիու վրավեն, զուր չանթեն էձգեց մզրախի ծեր ու երկնցուց օձուն։ Խղճաց զօձ, ըսեց. «Կրակի մեջ թըղ չվառի»։ Օձ մտավ մըջ չանթին ու քաշեց բերեց ուր մոտ։ Օձ էդ մարդու բոկեն փաթթվավ մինչև ուր մեջք։ Ըսեց.— Ես քըզի պտի խեղդիմ, անկարելի ա։

Էդ մարդ ըսեց.— Էրթանք, իրեք մարդու մոտ հարցում էնինք, եթե ըն իրեք մարդ իրավունք տվին՝ խեղդա, ես քըզի լավութեն իմ էնի, ի՞նչ աստված կպաշտիս օր զիս խեղդիս։

Շատ ու քիչ գացին, մատկու մը ռաստ էկան։ Էդ մարդ էդ մատկուն ըսեց.— Մատակ, ես էկեր իմ, տեսեր իմ՝ տեղ մը կրակ կվառեր։ Իդա օձ լա մեջն էր, ճամբախ չկեր մեջեն էլներ։ Ախր պիտի էրեցեր։ Ես լա խղճահարվա, զիմ չանթեն կապի մզրըխի ծեր, ըդ օձուն երկընցուցի, էդ օձ քաշվավ մըջ չանթին, կրակի միջեն ազատի։ Էդ օձ իդա դախ փաթթվի վըր իմ բոկին, կըսա՝ «Պտի զքըզի խեղդիմ»։ Իրավո՞ւնք ա զիս խեղդա։

Մատակ ըսեց.— Հա, իրավո՛ւնք ա զքըզի խեղդա, ո՛որի օր ես քանի չհել ենք, տարին ձագ մը իմ տիրուն կբերենք, օրեն էրկու քթոց կաթ իմ տիրու կնիկ իմ տկեն կհաններ։ Ըսօր ըխթիյարցեր իմ, տփե զիս, էնի դուս, էկեր իմ իդա սարեր։ Հում կաթի ուտողին ըխթիբար չկա,— ըսեց,— խեղդա։

Օձ տղի բոկ քամեց, տղեն ըսեց.— Ո՛որի՞ կքամես, դըռ մըր պայ-ման էրկու մարդ լա կա։ Եփ օր գացինք ըն էրկու մարդու մոտ, ըն էր-կու մարդ իրավունք տվին, ըն դախ զիս խեղդա։

Ու զուր ձին քշեց։

Շատ ու քիչ գնաց, ձիու մը ռաստ էկան։ Իմալ օր մատկուն պատմեց, ընմալ ձիուն լա պատմեց։

Ձին ըսեց.— Խեղդա, հում կաթի ուտողին ըխթիբար չկա։ Ես քանի չհել ենք, տարին քուռակ մա իմ տիրուն կբերենք, իմ տերը ո՛րմեն օր իմ պառեկեն չըր իչնե, զիս կհեծներ ու կօլորտեր։ Մկա օր դախցեր իմ, տփի վըր իմ պառեկին, զիս էնի դուս, ու ես էկեր իմ իդա սար,— ըսեց,— խեղդա։

Տղեն շատ ու քիչ զուր ձին քշեց, աղվըսու մը ռաստ էկավ, աղվես փախավ։

Ըսեց.— Աղվես ախբեր, մը փախնի, գործ մը մըղի կա քու մոտ։

Աղվես ըսեց.— Ի՞նչ ա։

Տղեն իմալ օր մատկուն ու ձիուն պատմեր էր, ընմալ աղվըսուն լա պատմեց։ Աղվես ըսեց.— Դու սուտ կէնիս։

Աղվես ուզեց լեպ էնել, օր զօձ տղի ըոկեն ցած բերեր, հ՝որի օր առանց լեպի օձ չըը իջնե ու խոսք չըը խասկնե։

Աղվես ըսեց.— Օր դու կրակեն ազատեր իս, օր դու սուտ չըս էնի, ֆըղ օձ իջնա գետին ու դու զֆորբեն կապա մզըրխի ծեր ու իշու օձու մոտ, սանք զօձ իմա՞լ կհանիս քու մոտ։

Աղվես օձուն ըսեց ու օձ իջավ։ Տղին աչքով էնեց, ըսեց.— Ջար։

Տղեն դեռ չըը ֆահմե։ Աղվես օր աչքով էնեց, տղեն նոր զարկեց։ Ու օձուց ազատվավ շնորհիվ աղվըսուն։

Էլավ ֆողեց, էկավ տուն։ Ուր մամ ըսեց.— Ինչու՞ խեղճ, առանց նեճիրի էկար։

Ըսեց.— Վազն արի։

Ու զուր գլխու գալած ուր մամուն պատմեց։

Ուր մամ ըսեց.— Աղեկ էղավ, հ՝որի՞ դու զքու պապու օսիաթ կորցուցիր։

Ժամանակ մ՝ անցավ, էմ լե էլավ դեմ ի Նամրուֆ գնաց։

Շատ խորոտիկ փառավոր նեճիր մը տեսավ։ Տեսավ ըն նեճիրի փոսֆ բալաք էր՝ զոլ մը սպիտակ էր, մեկ կարմիր էր, մեկ դեղին էր, մեկ կանաչ էր. վերջապես ինչքան վարդ գույն մը կեր, կեր մըչ էդ փոսֆին։

Ու զէդ նեճիր զարկեց, ու զէդ փոսֆ քըռֆեց, շատ ուրախացավ, առավ դեպի տուն էկավ։

Ուր մամուն ըսեց.— Ինչ օր էրեկ էլեր էր իմ գլուխ ու զէնի մոռցա, հ՝որի օր իդա խորոտիկ նեճիր հ՝էսօր ես բերեցի։

Ու մարդ մը էլավ տղին խոսաց, ըսեց.— Էդ նեճիր օր դու բերեր իս, Մշու թագավորի լայեղն ա, օր դու տանիս էնդրան, պտի հազար օսկի զքու բախշիշ առնիս։

Տղեն էլավ, առավ զուր նեճիր, ընկավ ճամբախ՝ դեպի Մուշ գնաց։ Ըն գախն օր գնաց Մուշ, թագավորի սարի դռան առեջ նստավ, ու թագավորի մարդիկ ըզըրնե հարցուցին, ըսեցին.— Դու ի՞նչ մարդ իս։

Ըսեց.—Ես Խասմե նեճըրվանի տղեն իմ,— ըսեց,— իմ պապ նեճիրվան էր, էլավ քանի տարի իմ պապ մեռիր ա, ընձի օսիաթ էնիր ա՝ ինչ գախ լավ նեճիր բռնիս, դու պտի Մշու թագավորին տանիս։ Ու էդա նեճիր շատ պատվական նեճիր էր, ուր կաշին շատ գեղեցիկ էր, բերեր իմ թագավորին նվեր։

Ու թագավորին ջուհաբ տարան։

Ըսեցին.—Խասմե նեճըրվանի տղեն լավ գեղեցիկ բան մը քըզի նվեր բերեր ա, ուր պապու օսիաթով։

Ու թագավոր ըսեց.— Կանչեք ֆի գա զէդ մարդ։

Կանչեցին։ Էկավ ու ղուր նեճրի փոսթ բերեց, թագավորին տվեց։ Թագավոր շատ ուրախացավ։ Թագավոր ուր խաղնեդարին ըսեց.— Ձէգա մարդ կանչիս տանիս, լավ մը ճեկիս։

Ու թագավորի խաղնեդար կանչեց տարավ, շամախ մը չէ՝ թուփ մը տղի էրես ղարկեց։ Տղեն լաց, ճամբախ իննկավ ու գնաց։ Դեպ ուր տուն դնաց։

Ուր մամ ըսեց.—Հ՛որի իս զքու նիյաթ էնի։

Ու ղուր էղելություն ղուր մամուն պատմեց։

Ըսեց.— Բան չկա, աստված օղորմած ա։

Մնաց. թագավոր ղըդ փոսթ օր թալեց մըչ ուր սենյակին ու վրեն նստավ, շատ փառավոր էղավ։ Ուր խաղնեդար վերուց ուրեն ըսեց.— Թագավոր ապրած, դինա՞ս,— ըսեց,— էդ փոսթին՝ պետք ա քու սենյակի պատեր բոլոր ֆլի օսկոռ շարվի։

Ըսեց.—Ապա էդ ֆլի օսկոռ ո՞վ պտի բերա։

Ըսեց.— էն օր ղըդ փոսթ բերեր ա, ղէդ ֆլի օսկոռ որհաթ կբերա։

Ու թագավոր նամակ մը գրեց տղին, ինչ պատմութեն օր խաղնեդար ուրին էներ էր, գրեց ու տղին ճամբցուց։

Նամակ օր էկավ, տղեն կարդաց, ուր մամուն պատմեց, շատ մըղպընավ տղեն։

Ըսեց.— Ես ինչպես էնեմ, ըդ ի՞նչ աստծու կրակ էր՝ ես հ՛ընկա։

Տղի մամ տղին էսեց.— Մը վախենա, աստված օղորմած ա, ըդ գործ թագավոր դրի քըղի, շատ հանգիստ գործ ա,— ուր մամ ուրեն ըսեց,— ինչ օր ես կըսեմ դու իմ խոսք էնիս։

Ըսեց.— Օր դու կէրթաս թագավորի առեջ կանիս, թագավորին կըսես՝ «Հազար խիդր անլվա բուրդ, հազար տիկ լա գինի, հազար ջվալ աղ, հազար հատ դևա, հազար հատ բալթաճի, հազար հատ մորթող, հազար հատ քըռթող, հազար հ՛ատ հ՛իստկող, ըդ բոլոր ոզրի քըսեն չէղնի՝ չէղնի։ Անգախ օր ղէդ բան դրստիր ղըմեն, ընկար ճամբախ, գացիր, կէրթաս, ֆլան տեխ շոռիկ մը կա, ընտեղ, ջրի դռներ կա դրված ընտեզ, աղբրի ակներ կթափեն մեջ, զհազար խիդր անլվա բուրդ կսեղմիս ղէն ղռներ կցամքցուս, ու զհազար տիկ գինին կըլնաս էն դռներ ու զքու հազար ջվալ աղ սերսուփ մը կպարզիս էն չայիրի մեջ ու քու զհազար դևեն ու մարդիկ կիտաս դեհ մը, կպատվըտիք։ Դու պահնորդ կինաս, տեսնաս օր ֆլի նախիր կիգա, առեջ կպարզվին աղի վրեն, ջիտակ մը զաղ կուտին ու կծառվըռնան, դառնան վըր գինու գռներուն, զգինին կխմին ու սարխոջնան, կհարբենան, կթափին վըր իրարու։ Դու էնգախ կկանչիս, կասիս՝ մորթողներ, քըռթողներ, հ՛իստկողներ, բալթաճիներ արեք, արեք

ու աշխատեք։ Ընգախ ամեկ կիգա ուրեն կմորթա, ամեկ ուրեն կաշխատի, հազար դևի բեռ կբռնեն ֆլի օսկոռ ու բազրկան, կընկցուս ճամբաս դեմ ի թագավորին, կիգա։

Իմալ օր ուր մամ պատմութեն էնեց ու զինք ուր մամու պատմութեն ղընմալ էնեց։ Գնաց թագավորի առջ կայնավ, ինչ օր ըսեր էր թագավոր, թագավորի ըսած խոսք կատարեց ու բերեց։

Թագավոր ըսեց խազնեդարին.— Էլի, զտղի բախշիշ լավ մը տու, թըխ էրթա։

Խազնեդար էլավ, զտղին կանչեց, տարավ չափալիխ մը չէ, թուփ մը տղի էրես զարկեց։ Տղեն լաց, դեմ ուր տուն գնաց ու զուր գլխու գալած ուր մամուն պատմեց։

Շատ ու քիչ մնաց։ Թագավոր զէդ ֆլի օսկոռներ ուր սենյակի պատեր չարեց ու լավ խորտիկ մը էղավ ու զուր փոստ լա օր թալեց, նըստավ վրեն, փարլամիշ էղավ։ Շատ խորոտ ու գեղեցիկ էր։

Խազնեդար թագավորին ըսեց.—Ղմալ օր դու նստեր իս մեջ էդ սենյակին, փարլամիշ էղեր իս, քըզի բա մը լա մնացեր ա պակաս։

Թագավոր ըսեց.— Ի՞նչ ա։

Ըսեց.— Հնդստանի թագավորի ախչիկ, օր ուր մամուց էղեր ա, իդա տասնուհինգ տարի դուրս չէլի, լուս ու արև չը տեսի։ Օր ղանի քըզի ուղիս բերիս, ընմալ խորոտ ա, արեգական պես փեյք կիտա, օր դու նոր վայելիս կյանք։

Թագավոր ըսեց.— Չիդա ախչիկ ո՞ր պտի բերա։

Խազնեդար ըսեց.— Էն օր զէդ ֆլի օսկոռներ բերիր ա, էն օր զէդ խորոտիկ փոստ բերիր ա, ընի ոհաթ կարող ա ղէդ ախչիկ բերա։

Ու թագավոր էլավ նամակ մը տղին ղրկեց։

Տղեն շատ զուր նիյաթ էնից, մըղպընավ, ըսեց.— Է, տեր աստված, ըդ անտանելի ցավեր հ՛որի՞ իմ գլխու վրեն բերեցի, ես էրեխե մը իետ իմ հալին, ես դո՞ր, էդ ցավեր դո՞ր։

Ուր մամ ըսեց.— Քու նիյաթ հ՛որի՞ կէնիս, աստված օղորմած ա, ըդ գործ օր թագավոր դրի քեղի, չատ հանգիստ գործ մ՛ ա, հ՛ուհու մը վախենա,— ըսեց,— թագավոր օր զքըզի կկանչա, կէրթաս թագավորի առջ կկայնիս ու թագավորին կըսես՝ հարիր մաղազա խութնի ապրանք, չորս-հինգ հատ կյամի կպատրաստիս, ըդ բոլոր օր խաղնեդարի քըսեն չէղնի՝ անկարելի ա, ըտ բան պետկ չի գա։ Էդ ապրանք օր խազնեդար պատրաստեց, կըլնաս հինգ հատ կյամու մեջ, կյամիչիք բոլոր հազիր կպահիս ու կնստիս մըջ կյամուն ու կէրթաս, ու կյամին կքշիս Հնդստանու առջ կկայնիս։ Էդ ապրանք հ՛մեն կքաշիս շուկեն, կպարզիս, դալալ

կիտաս կանչել, կըսիս՝ «Արեք առեք աղեկ ապրանք, ինչ օր աստվածու-
թեն ստեղծեր ա ու ձեր սիրտ կուզա՝ իմ ապրանքի մեջ կա։ Առեք էժան
ու տարեք»։ Հետո թագավորի ախչիկ ուր մամուն շատ պտի խնդրվի ու
ղուր ջառեք ուր հետ կառնի ու կիգա սերի համար, դու պտի թալիս մըշ
կյամուն ու ետ դառնաս, իսկի ետև չաչքիս։ Ընդրա տաժին ուր հետն ա,
ըն ատեն ախչիկ կըսա՝ «Տաժի, գըդի տաժի, դու շուտ լուր տանիս իմ
պապուն, ասքար հ՚ըլնա կյամիք, իգա, գիս փախցուցին ու տարան»։
Դու լա պտի ըսիս՝ «Ձուկ, գըդի ձուկ, հասի զէդրա տաժին կըլլու, օր մեք
աղատվինք»։ Ախչիկ կըսա՝ «Մատնիկ, գըդի մատնիկ, իդա խադար
տարի ղըղղի մատն իմ էցկի, իդա նեղ դախ ընձի հասնիս, ու էրթաս իմ
պապուն լուր տանիս, զասքար Քըխ քոմա, հ՚ըլնա կյամին, ճամբցու
ընձի հավար հասնին, գիս փախցուցին, տարան»։ Ըն գախ դու կըսիս՝
«Ձուկ, գըդի ձուկ, դու շուտ զէդա մատնիկ կըլլուս, օր մեք աղատվինք»։
Ձախչիկ կառնիս, կրերիս թագավորին։

Ու իմալ օր ուր մամ ուրեն կպատմա ու ինք զուր մամու պատմած
կհասկընա, կէրթա թագավորի առեջ կայնի, կըսա՝ իդաքան ապրանք
պատրաստա խազնադար, օր էրթամ, իդա ախչիկ քըզի բերեմ, օր խազ-
նեդարի քըսեն չըլնի՝ անկարելի ա, չէղնի

Խազնեդար ժըխո առաջ թունդիր մը օսկի ուր վրեն պարտք էնիր
էր, էրկու թունդիր լե էնեց, զէդ հ՚ըմեն պատրաստեց, տղի գործ հա-
ջողցուց, տղեն էլավ, գնաց։

Ինչպես ուր մամ ուրին պատմեր էր բոլոր էնեց ու կատարեց։ Ու
ղՀնդստանա թագավորի ախչիկ բերեց։

Ախչիկ տղին ըսեց— Դոզրի խոսա, դու ղիս քըզի՞ կտանիս, թե
ուրիշ մարդու կտանիս։ Թե ուրիշ մարդու կտանիս, կանանչ վարոց մը
ունիմ, օր զարկիմ դետին, կըռնամ զքըզի էնիմ քար։ Թե քըզի կտանիս,
ժըխո կարելի ա գիր ու խսմաթ էղեր ու, ես պտի զքըզի առնիմ։

Տղեն ըսեց.— Ես քենե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, ես քըզի
կտանիմ թագավորին։ Հ՚որի օր թագավոր զոր ա, ընձի զորով ա ճամբցի,
Ես լա ճարահատյալ մնալով էկեր իմ ու զքըզի կտանիմ։

Ախչկան ըսեց.—Եթե կըրնաս ճամբաի մը հանիս թագավորին ու
դու ղիս առնիս, ես շատ սիրով զքըզի կառնիմ։

Ախչիկ վերուց ըսեց.— Շատ լավ կէղնի, էդի իմ ձեռաց գործն ա։
Ու զախչիկ առավ, էկավ թագավորին։

Եփ օր բերեց թագավորին, զախչիկ, դրեց մըշ սենյակին, զտղեն
լա կանչեց մըշ էն սենյակին։ Ախչիկ զուր կանանչ վարոց զարկեց գե-
տին, աստծուց խնդրվավ, ըսեց.— Թագավոր դառնա շուն մա, խազնե-

դար լա դառնա տաժի մա, տարին տսվերկու ամիս օր գան քոշք ու սարի բոլոր օլորտին։

Ինչպես օր աստծուց խնդրեց, հըմալ էղավ։

Տղին ըսեց.— Դու բան մա չոմի՞ս։

Տղեն ըսեց.— Մեկ մայր ունիմ։

Ուղարկեց տղի մայր լա բերեց։ Տղեն ու թագավորի ախչիկ առան ղիրար, տաս-տասնուհինգ օր խարսնիս էնեցին, կեր ու խում էնին, վայելեցին զթագավորի դուվլաթ ու քոշք ու սարեն։

Ուրանք հասան ուրանց մուրազին, դուք լա՝ ձեր։